

24.02.2010թ.

## ՏԵՂԵԿԱՆՔ

Հաշվի առնելով ՀՀ վերահսկիչ պալատի կողմից 2008-2009թթ. ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում կատարված ստուգման արդյունքները՝ կապված հակադաբադային պատվաստանյութի ձեռք բերումների հետ, ՀՀ վարչապետի վերահսկողական ծառայությունն ուսումնասիրել է ՀՀ հակադաբադային պատվաստանյութի ներկրման գործընթացը:

Ուսումնասիրությունից պարզվել է, որ ՀՀ-ում հակադաբադային միջոցառումներն իրականացվում են հիմնականում խոշոր և մանր եղջերավոր անասունների նկատմամբ (այսուհետ՝ ԽԵԱ, ՄԵԱ):

Դեռևս 20.08.2000թ. ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից հաստատված հրահանգի համաձայն անասունների մեծահասակ գլխաքանակը պատվաստվում է յուրաքանչյուր 6 ամիսը մեկ, իսկ մատղաշը՝ 4 ամսականից և վերապատվաստվում է յուրաքանչյուր 3 ամիսը մեկ՝ մինչև 18 ամսական դառնալը: Հայտնաբերված վարակի գոտիներում նախատեսվում է բոլոր առողջ կենդանիներին պատվաստել ևս 2 անգամ՝ 10-20 օր ընդմիջումներով:

Հարկ է նշել, որ ԽԵԱ-ի պատվաստման համար յուրաքանչյուր դեպքում օգտագործվում է 1 դոզա, իսկ ՄԵԱ-ի դեպքում՝ 0,5 դոզա պատվաստանյութ:

ՀՀ հակադաբադային պատվաստանյութի պահանջարկը բավարարվում է ՀՀ պետական բյուջեի հատկացումներով ձեռք բերված ու ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից՝ որպես հումանիտար օգնություն, սրամադրված պատվաստանյութի հաշվին: Երկու դեպքում էլ ձեռք է բերվում Ռուսաստանի Դաշնության արտադրության (Վլադիմիր և Պոկրով քաղաքներ) և ՀՀ-ում գրանցված կենդանիների հակադաբադային Ա(Իրան-2005), Օ(Վրաստան-2000), Ասիա-1 (Վրաստան-2001) վիրուսների տարատեսակներից պատրաստված պատվաստանյութ:

Հանրապետությունում 2006-2009թթ. առկա անասնագլխաքանակի (հավելված 1) և դաբադի պատվաստանյութի պահանջարկի (հավելված 2) ուսումնասիրությունից պարզվել է, որ նշված տարիներին պատվաստանյութի հաշվարկված պահանջարկը չի

համապատասխանել անհրաժեշտ չափաքանակներին, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՄԵԱ-ի պատվաստումը հիմնականում նախատեսվել է իրականացնել տարին միայն մեկ անգամ:

Դաբադի պատվաստանյութի տարեկան պահանջարկի հաշվարկման ժամանակ, նախատեսվել է կորուստ 5%-ի չափով, որի վերաբերյալ համապատասխան նորմատիվային փաստաթուղթ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում առկա չի եղել:

Պետական կարիքների համար անհրաժեշտ դաբադի պատվաստանյութի ձեռք բերման գծով «Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված պարբերական մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվել «Բիո Ունիվերսալ» ՍՊԸ-ն, որի հետ 29.12.2007թ. կնքվել է գլխավոր գնման պայմանագիր:

2008-2009թթ. հանրապետություն է ներկրվել համապատասխանաբար 1868,8 և 1923,7 հազար դոլա՝ շուրջ 1,2 մլրդ դրամի պատվաստանյութ, որի մեկ դոզայի ձեռք բերման գինը կազմել է շուրջ 45 ԱՄՆ ցենտ, այն դեպքում երբ ՄԱԿ-ի համապատասխան կազմակերպության կողմից մեկ դոզայի ձեռք բերման գինը կազմել է 35 ԱՄՆ ցենտ:

Հարկ է նշել, որ պատվաստանյութի գնման մրցույթում մեկ դոզայի ինքնարժեքի հաշվարկը 2008 և 2009 թվականներին կազմել է 290 դրամ (առանց ԱԱՀ-ի), ընդ որում պատվաստանյութի ձեռք բերման արժեքը հաշվարկվել է 183 դրամով, իսկ ձեռնարկության ձեռք բերման միջին գինը նշված տարիներին կազմել է համապատասխանաբար 143 և 168 դրամ:

Այսինքն, նշված տարիներին «Բիո Ունիվերսալ» ՍՊԸ-ն դաբադի պատվաստանյութը ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը վաճառել է ձեռք բերման գնի մոտ կրկնակի արժեքով:

Մրցույթի արդյունքում 2010թ. նախատեսվել է հանրապետություն ներկրել 370461,0 հազար դրամի 949,9 հազար դոզա պատվաստանյութ: Պարզվել է, որ «Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ին ներկայացված պատվաստանյութի գնման մրցույթի փաստաթղթերում մեկ դոզայի ինքնարժեքը հաշվարկվել է 325 դրամով (առանց ԱԱՀ-ի), ընդ որում պատվաստանյութի ձեռք

բերման արժեքը հաշվարկվել է 170 դրամով, այսինքն ընթացիկ տարում ևս մեկ դոզայի ինքնարժեքը հաշվարկվել է ձեռք բերման գնի մոտ կրկնակի արժեքով:

Փաստորեն, եթե «Բիո Ունիվերսալ» ՍՊԸ-ի կողմից պատվաստանյութի ձեռք բերման և իրացման գնի տարբերությունը 2008 և 2009 թվականներին կազմել է 107 դրամ (290-183), ապա 2010թ. այն կկազմի 155 դրամ (325-170): Մեր կարծիքով, մատակարարի կողմից լիազոր մարմնին վաճառված պատվաստանյութի գինը հիմնավորված չէ և վերանայման կարիք ունի: Առավել ևս, նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ պետական բյուջեի սղության պայմաններում հիշյալ պատվաստանյութի ձեռք բերման համար 2010թ. հատկացվել է 370,5 մլն դրամ (2008թ.- 542,0 մլն դրամ` 1868,8 դոզա, 2009թ. - 669,4 մլն դրամ` 1923,7 դոզա), սակայն մրցութային հանձնաժողովի կողմից գների հսկողության գործում ցուցաբերած թողտվության արդյունքում, պատվաստանյութի 1 դոզայի արժեքի ոչ հիմնավոր բարձրացման պատճառով, նախատեսվել է ձեռք բերել ավելի քիչ քանակի պատվաստանյութ (949,9 դոզա):

Հարկ է նշել, որ ՀՀ վերահսկիչ պալատի կողմից ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում կատարված ստուգումներով արձանագրվել է, որ եթե պատվաստանյութը ձեռք բերվեր միջազգային շուկայական գներով (CIP Երևան` 1 դոզայի արժեքը 0,35 ԱՄՆ դոլար), ապա 2008թ. կտնտեսվեր 1121280 ԱՄՆ դոլար, իսկ 2009թ.` 827191 ԱՄՆ դոլար:

Փաստորեն, 2009թ. դեկտեմբերի 15-ին` 2010թ. համար անհրաժեշտ հակադաբադային պատվաստանյութի ձեռք բերման նպատակով անցկացված մրցութի ժամանակ, անտեսվել է ՀՀ վերահսկիչ պալատի կողմից մատնացույց արված գների անթուլատրելի աճը և դեռ ավելին, ընդունվել է «Բիո Ունիվերսալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պատվաստանյութի ներկրման գնային առաջարկը և ինքնարժեքը, որը ավելի բարձր է նախատեսվածից: Պետք է նշել, որ այդ կապակցությամբ 13.01.2010թ. մրցութային հանձնաժողովի կողմից մրցութի արդյունքների ամփոփումը հետաձգվել է 2 օրով, որի մասին տեղյակ են պահվել ՀՀ գյուղատնտեսության նախարարության ղեկավարությանը, սակայն վերջիններիս կողմից համապատասխան միջոցներ չեն ձեռնարկվել պետական միջոցների

արդյունավետ օգտագործման ուղղությամբ և 15.01.2010թ. հանձնաժողովը որոշում է կայացրել մրցույթում «Բիո Ունիվերսալ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին և վերջինիս հետ 22.01.2010թ. կնքվել է համապատասխան պայմանագիր, որով պատվաստանյութի 1 դոզայի արժեքը սահմանվել է 325 դրամ (առանց ԱԱՀ-ի) կամ 390 դրամ (ԱԱՀ-ով):

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պատվաստանյութի գնման և իրացման գների մեծ տարբերությունը պայմանավորված է մրցույթի մասնակցի համար մասնագիտական հատկանիշների գծով, սահմանված բարձր որակավորման ցուցանիշներով: Այսպես, պետության կարիքների համար գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պատվաստումներ կատարելու համար անրաժեշտ հակադաբադային պատվաստանյութի մրցույթի հրավերի հայտարարության համաձայն, մրցույթին մասնակցելու ժամանակ, մասնակիցը պետք է դիմումը ներկայացնելու պահի նախորդ 3 տարիների ընթացքում ունենա նմանատիպ ապրանքների մատակարարման առնվազն 200 մլն դրամի շրջանառություն: Նշված ծավալը, մեր կարծիքով հիմնավորված չէ, որը սահմանափակում է մրցույթի մասնակիցների թիվը և խոչընդոտում շուկայի ազատ մրցակցությանը, ինչը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

Մյուս կողմից, ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ձևավորված մրցութային հանձնաժողովը՝ խախտելով ՀՀ կառավարության 05.06.2008թ. N853-Ն որոշման 29-րդ հոդվածի 3-րդ ենթակետի պահանջը, օբյեկտիվորեն չի գնահատել մատակարարի կողմից ներկայացված ֆինանսական ցուցանիշների՝ գնային առաջարկի և ինքնարժեքի հաշվարկման ճշտությունը, դրանով իսկ, տարիներ շարունակ, նպաստելով ուռճացված գներով պատվաստանյութի ձեռք բերմանը:

Ավելին, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը նախքան հակադաբադային պատվաստանյութի գնումների հայտը «Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ ներկայացնելը, պետք է ՀՀ կառավարության 24.12.2009թ. N1522-Ն որոշմամբ հաստատված գների անվանացանկում՝ ՀՀ ֆինանսների նախարարության համաձայնությամբ, կատարեր համապատասխան

փոփոխություններ (առանց հիմնավորման 1 դոզա պատվաստանյութը 348 դրամի փոխարեն նախատեսվել է գնել 390 դրամով), ինչը չի կատարվել:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ հակադաբադային պատվաստանյութը՝ գոնե մասնակիորեն, անհրաժեշտ է ՀՀ ներկրել ընթացիկ տարվա գարնանը, նպատակահարմար է պատվաստանյութի գնումն իրականացնել մրցակցային բանակցության միջոցով՝ վերանայելով պատվաստանյութի ձեռք բերման գինը՝ թույլ չտալով ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների անարդյունավետ օգտագործումը, ինչը հնարավորություն կտա ավելացնել ՀՀ ներկրվող հակադաբադային պատվաստանյութի ծավալները:

Միաժամանակ, ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության «Եվրոմիության դաբադի վերահսկողության ծրագրի» ազգային խորհրդատու Ս.Խառատյանի հետ հարցի քննարկումների ընթացքում պարզվել է, որ հնարավոր է հետագայում այդ կազմակերպության միջոցով հակադաբադային պատվաստանյութ ներկրել առավել մատչելի գներով:

Ուսումնասիրության արդյունքները փաստում են, որ հակադաբադային պատվաստանյութի ձեռք բերման ամբողջ գործընթացի ժամանակ ՀՀ գյուղատնտեսության նախարարության պատասխանատու (պաշտոնատար) անձանցից կազմավորված հանձնաժողովների կողմից (2008-2009թթ. հանձնաժողովի նախագահ՝ ֆինանսական վարչության պետ Հովհաննես Հովհաննիսյան, 2010թ. հանձնաժողովի նախագահ՝ Սննդամթերքի անվտանգության և անասնաուժական պետական տեսչության պետի տեղակալ Գևորգ Թովմասյան) ոչ միայն չի վերանայվել ձեռք բերվող ապրանքի իրական ինքնարժեքը և ձեռք բերման գինը, այլ ընդհակառակը արհեստական պայմաններ են ստեղծվել մրցույթի անցկացման հայտում լրացուցիչ սահմանափակումներ մտցնելով: Ավելին, պատվաստանյութի արժեքի ակնհայտ, անհիմն, բարձր լինելու հետևանքով մրցույթի արդյունքների ամփոփումը 2 օրով հետաձգելու պարագայում, չի ցուցաբերվել քաղաքացիական ծառայողին վայել պատասխանատվություն պետական միջոցների անարդյունավետ օգտագործումը կանխելու համար և մրցույթում հաղթող է ճանաչվել միակ մասնակիցը:

Մրցույթի իրականացումից հետո ՀՀ գյուղատնտեսության նախարարության ոչ մի պաշտոնատար և պատասխանատու անձ չի կանխել պետական միջոցների անարդյունավետ օգտագործումը, դեռ ավելին թույլ է տրվել, որ հաղթող կազմակերպության հետ կնքվի գնման գլխավոր պայմանագիր:

Գտնում ենք, որ անընդունելի է ՀՀ գյուղատնտեսության նախարարության ղեկավարության և պաշտոնատար անձանց կողմից պետական միջոցների ծախսի նկատմամբ նման մոտեցումը, ուստի պատասխանատու անձանց անհրաժեշտ է ենթարկել խիստ կարգապահական տույժերի:

**ՀՀ վարչապետի վերահսկողական ծառայություն**